
**ԺՈՂՈՎՐԴԱԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ
Ս. ԿԱՊՈՒՏԻԿՑԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ՄԻՐՈՒՄՅԱՆ Լ. Մ.

Ժողովրդախոսակցական բառաշերտը ոճագիտության կարգերում միջանկյալ տեղ է գրավում գրական և բարբառային բառաշերտերի միջև: Ինչպես նշում է ռուս լեզվաբան Ա. Ի. Եֆիմովը, «Ժողովրդախոսակցական բառաշերտի բառերը լեզվական այնպիսի միջոցներ են, որոնք նախ և առաջ գործածվում են համազգային խոսակցական կենցաղային լեզվի տարբեր ոճերում և դուրս են եկել գրական արտահայտության համընդհանուր ճանաչում գտած միջոցների ու նորմերի սահմաններից»¹: Այս բառաշերտին պատկանող բառերի գերակշիռ մասը մատչելի և հասկանալի է ժողովրդի լայն զանգվածներին, և նրանով արտահայտված խոսքը միանման է ընկալում ունկնդիրը կամ ընթերցողը: Ժողովրդախոսակցական բառաշերտի մեջ մտնում են հիմնականում այն բառերը, բառակապակցություններն ու արտահայտությունները, որոնցով պատկերվում են ժողովրդի կենցաղը, ապրելակերպը, սովորույթները, բարքերը, կենցաղի առարկաները, բնական կամ հասարակական երևույթները: Ժողովրդախոսակցական ոճով արտահայտված խոսքը ոչ այլ ինչ է, եթե ոչ լեզվի առօրյա-խոսակցական տարբերակ: Դրանում կարող են լինել զգալի թվով բարբառային ու փոխառյալ բառեր, ածանցական կազմություններ, հարադրավոր բարդություններ, դարձվածքներ: Այն՝ որպես ժողովրդական լեզվամտածողության արտահայտման միջոց, աչքի է ընկնում հուզաարտահայտչական երանգով, ինչն էլ գրողի խոսքին առավել կենդանություն է հաղորդում: Գրական մեծ վարպետությամբ, բանաստեղծին հատուկ քնարական ջերմությամբ են գրված Ս. Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են», «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» ստեղծագործությունները: Դրանք արդյունք են գրողի՝ հայկական գաղթօջախներ կատարած ուղևորությունների: Հարազատորեն վերարտադրելով տեսածն ու լսածը՝ Կապուտիկյանը կերտել է բովանդակության և կառուցվածքի տեսակետից հարուստ երկեր, որոնց կարևոր գեղարվեստական արժանիքներից մեկը շարադրանքի լեզուն է: Նրբորեն զուգորդելով հայոց արդի գրական լեզվի երկու՝ արևելահայ և արևմտահայ ճյուղերը, տեղին ու հաջողությամբ գործածելով արևմտահայ բարբառները՝ գրողն օգտվել է նաև ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ արտահայտչաձևներից: Բառապաշարի տարբեր շերտերի հմուտ գործածությամբ Կապուտիկյանը ներդաշնակություն է ստեղծել իր և իր կերտած հերոսների խոսքի միջև:

Հուշագրությունների լեզվի էական առանձնահատկություններից մեկը ժողովրդայնությունն է, որը, ինչպես նշում է Հ. Հարությունյանը,

¹ Ефимов А. Стилистика художественной речи, М., 1957, с. 220.

«ամենից առաջ ենթադրում է ժողովրդական լեզվամտածողության էական գծերի հմուտ օգտագործում»²:

Ինչպես բառապաշարի մյուս շերտերը, ժողովրդախոսակցական բառաշերտը նույնպես հուշագրությունների լեզվում թեմայից, բովանդակությունից անկախ չի արժեքավորվում: Այն համապատասխանում է հիշյալ ստեղծագործությունների նյութին, որն օտար միջավայրում հայրենիք տենչացող հայ ժողովրդի կենցաղն է, ապրելակերպը: Հերոսները գրողին հարազատ ու մտերիմ մարդիկ են, որոնց բարդ ու բազմաձևալ կյանքի նկարագիրն է տալիս հեղինակը: Նրանց խոսքում հայերենի խոսակցական տարբերակին բնորոշ տարրերը նպաստում են կերպարների լեզվի անհատականացմանը:

Հուշագրություններում գրողը ժողովրդախոսակցական լեզվի տարրերով է համալրում նաև հեղինակային լեզուն, որը հազեցած է ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ բառերով, ժողովրդական խոսքին բնորոշ հարադրություններով, կրկնավորներով, դարձվածքներով:

Հեղինակային լեզվում հայերենի խոսակցական տարբերակին բնորոշ տասնյակ բառեր, որոնց մեծ մասը ժողովրդախոսակցական լեզվին է անցել բարբառներից, ունեն իրենց գրական համարժեքները: Հոմանիշ գրական բառերից տարբերվելով ոչ թե իմաստային որոշ կոդներով, այլ միայն գործառությանը՝ ժողովրդախոսակցական մի շարք բառեր բնական, հավաստի են հնչում Ուջան գյուղում ապրող ծերունիներին, լոռեցի Սահինյանին, հայ ժողովրդին տրվող բնութագրություններում: Գրողը նրանց ներկայացնում է իրենց իսկ լեզվամտածողությանը հարազատ թագրեհ, ցանքս, ինքնասածի ժողովրդախոսակցական⁴ բառերով, ինչպես. «Գյուղում դեռ կան Անդրանիկի բանակում կռված զինվորներ, որոնք արդեն ծերացած, թագրեհը կծղած ձեռքերում շուռումուռ տալով, շարվել են արձանի կողքի նստարաններին» (Խ-52)⁵, «Մի զարմանալի խաղաղություն կա Սահինյանի դեմքին...՝ իր հողը հերկող, ցանքսն անող մարդու խաղաղություն...» (Խ-432), «Անկարգ ժողովուրդ ենք, անկա՛րգ, ու նաև՝ խե՛նթ. ու նաև՝յուրովի ինքնասածի՛...» (Բ-98)⁶:

² Հարությունյան Հ., Գրողի լեզվի և ոճի հարցեր, Ե., 1979, էջ 24:

³ Այս հոդվածում քննել ենք միայն հեղինակային լեզվում ժողովրդախոսակցական բառերի, անվանական և բայական հարադրությունների ոճական արժեքը:

⁴ Այս և մյուս բոլոր բառերը ժողովրդախոսակցական ենք դիտել՝ հիմք ընդունելով Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976:

⁵ Այստեղ և մեր հետագա շարադրանքի ընթացքում նկատի ունենք «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» գիրքը և համապատասխան էջը: Մ. Կապուտիկյան, Երկեր 3 հատորով, հ. 3, Ե., 1985:

⁶ Այստեղ և մեր հետագա շարադրանքի ընթացքում նկատի ունենք «Քարավանները դեռ քայլում են» գիրքը և համապատասխան էջը: Մ. Կապուտիկյան, Երկերի ժողովածու, 2 հատորով, հ. 2, Ե., 1978:

Մեկ այլ դեպքում գրողն ընդգծում է Չարչապուք գյուղում ապրող հայերի հյուրասիրությունը. «... տան պուճախներն են քրքրում, ուզում են անպայման մի բանով հյուրասիրած լինել» (Ք-414): Խոսակցական լեզվում նույնպես լայն կիրառություն ունեցող անկյուն բառի փոխարեն գյուղում ապրող հայի լեզվամտածողությանը, անշուշտ, ավելի հարազատ է պուճախ բառը:

Հերոսներին բնութագրելիս գրողն օգտվել է նաև ժողովրդական լեզվում տարածված մեկ այլ արտահայտչամիջոցից՝ ժողովրդայնության հետ դրսևորելով նաև որոշակի վերաբերմունք հերոսների նկատմամբ: Դրանք ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ (ա)վարի ածանցով կազմություններն են, որոնց դիմելով՝ գրողն իր մտերմական վերաբերմունքն է արտահայտում Նարդուհու, Անյայի, Տեմիրճյանի և այլ հերոսների նկատմամբ. «Նարդուհին առաջվա տնավարի կեցվածքը չուներ» (Ք-26), «Անյան ինքն էլ ուսանողուհու պես բարակ էր ու աղջկավարի» (Ք-86), «Եվ ահա պարոն Տեմիրճյանը ջահելավարի թեքում է ծնկները...» (Ք-326), «Խոշոր-խոշոր, գյուղացիավարի մարդ էր» (Խ-388):

Հեղինակային խոսքում առանձին խումբ են կազմում հուզական երանգավորմամբ օժտված մի քանի բառեր, որոնք արտահայտում են գրողի դրական վերաբերմունքը: Նվազական, փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներով կազմված հուզաարտահայտչական այդ բառերի գործածությամբ գրողն իր քնքշանքն է արտահայտում փոքրիկների նկատմամբ. «...երեխաներն էլ երեխաներ էին՝ սևուկ, խլալտուն դնչիկներով» (Խ-326), «...հատակի մակերեսը ծեփված է կարճիկ ու թմբիկ մանուկներով» (Ք-193), «...մանկիկը քնի մեջ անգամ իր կույր շուրթերով մոր կուրծքն էր փրնտրում...» (Ք-181): Այլ հերոսների նկատմամբ գրողի համակրանքն արտահայտելու նպատակով են գործածված լղարիկ (Ք-294), նիհարիկ (Ք-92), բարալիկ (Ք-10), մամիկ (Ք-45) բառերը:

Յուրահատուկ զգացմունքայնություն են արտահայտում այն բառերը, որտեղ նվազական իկ ածանցի հետ հանդես է գալիս նաև լ ածականը: Գրողը ժողովրդական լեզվում տարածված այս արտահայտչամիջոցին է դիմում նվազական իմաստը շեշտելու, ընդգծելու նպատակով, ինչպես՝ քիփիկ (Խ-300), կոկիկ (Խ-84, Ք-18), կարճիկ (Խ-190), նեղիկ (Ք-16), ցածիկ (Խ-17, Ք-233):

Հեղինակային խոսքում գրողի տարբեր վերաբերմունքն են արտահայտում ժողովրդական երանգ ունեցող այլ բառեր:

Նավթային բանվոր Մատթևոս Պոյաճյանի խեղճ, թշվառ ապրելակերպի նկարագրության հաստատում գրողի կարեկցական վերաբերմունքը դրսևորվում է նաև չուլ ժողովրդախոսակցական բառի գործածությամբ՝ ընդգծելով նրանց ծայրահեղ աղքատությունը. «Բարակ, հողածեփ պատեր, հինգ-վեց մետրանոց հողե հատակ և հատակին՝ չուլերի մեջ փաթաթված հիվանդ մայրը» (Ք-413):

Ժողովրդախոսակցական որոշ բառեր հասարակաբանական երանգ ունեն, որը նպաստում է գրողի բացասական վերաբերմունքի դրսևորմանը. «...ի՞նչ է ասում այս հաստապոռը» (Խ-102), «Միայն թե նայել այս շշկլած, ներքին փոթորիկներից ամեն պահ կերպարանափոխվող դեմքին...» (Խ-371), «Ֆիլմի վերջում՝ իրար թխմած շեկ ու շագանակագույն բեղ – մորուքների մեջ ես նկատեցի Գասպարի սևաթաթախ դեմքը...» (Խ-131): Ժողովրդայնությունն և վերաբերմունք արտահայտող հիշյալ բառերի գրական հաստաշրթունք, շփոթված, խցկված հոմանիշները չեզոք են, վերաբերմունք չեն պարունակում, գուրկ են ոճական որևէ գունավորումից: Այդ պատճառով էլ գրողը նախընտրում է ժողովրդախոսակցական տարբերակը:

Ժողովրդախոսակցական խակ և սաղացնել բառերը հեղինակային խոսքում գործածված են խոսակցական լեզվում ձեռք բերած անփորձ, չգարգացած, ոչ հմուտ (մարդու վերաբերյալ) և վաճառել, իրացնել փոխաբերական իմաստներով՝ արտահայտելով գրողի հեզնական վերաբերմունքը. «Իրենց շնորհքն էին ցուցադրում երիտասարդ երգիչներ, երգչուհիներ, պարի և երգի խմբակներ՝ մեծ մասամբ ինքնագործ, արվեստի առումով խակ ու թերի» (Ք-52), «... օրերից մի օր ես պետք է իմ կիսատ-պոռատ «Մարսելյեզը» սաղացնեմ Վաշինգտոնում» (Խ-136):

Հեղինակային լեզվի ժողովրդախոսակցական բառաշերտում որոշակի թիվ են կազմում համագործածական բառերի՝ իմաստային այս կամ այն առումով ժողովրդախոսակցական կիրառությունները: Այդ բառերը ժողովրդախոսակցական լեզվամտածողության կնիքն են կրում խոսքային համապատասխան իրադրություններում: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, «Յուրաքանչյուր բառի արտահայտած իմաստը, նրա փոխաբերական կիրառությունը կարող են հայտնի դառնալ, բացահայտվել միայն տվյալ խոսքաշարում, բառի կոնկրետ կիրառության դեպքում»⁷:

Լեզվական մակարդակում իրենց առաջնային իմաստներով չեզոք տնկել և թոցնել բառերը խոսքային համապատասխան կիրառություններում հանդես են գալիս որպես ոճաբանորեն նշույթավոր միավորներ: Գործածվելով կանգնեցնել և գողանալ հասկացությունների փոխարեն՝ այդ բառերը դրսևորում են նաև գրողի բացասական, արհամարհական վերաբերմունքը, ինչպես՝ «Դյադյա Գրիշը տնկեց իր ավտոմեքենան շարքերից մեկում» (Խ-264), «...Քենեդի օդանավակայանի խառնիճադանջում որևէ մեկը պարզապես «թոցրել» էր...» (Խ-351):

Խոսքին անմիջականություն, բնականություն հաղորդելու նպատակով գրողը հաճախ է նախընտրում միջոճային բառերի՝ խոսակցական լեզվում տարածված իմաստներով կիրառությունները: Այսպես՝ տաքանալ բառը խոսակցական լեզվում ունի նաև զայրանալ, քաշվել բառը՝ ամաչել իմաստները: Հիշյալ բառերն այդ իմաստներով

⁷ Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Ե., 2003, էջ 124:

են գործածված հետևյալ արտահայտություններում. «Մի բարձրահասակ, դերասանի դեմքով տղամարդ տաքացած խոսում էր» (Խ-73), «... եղբայրս իրեն քաշված էր պահում» (Ք-63):

Բաժանվել, հեռանալ (մեկնել) հասկացությունների փոխարեն խոսակցական լեզվում հաճախ է գործածվում պոկվել բառը: Դիպուկ է բառի այդ իմաստներով գործածությունը հետևյալ բնագրային օրինակներում. «Լիդան պոկվում է գրկիցս» (Խ-84), «...պոկվելով խրմբից, առաջ է գալիս...» (Ք-225), «Վերջապես հաջողվեց պոկվել Երևանից...» (Ք-11):

Կարևորելով գեղարվեստական լեզվում համագործածական բառերի ժողովրդախոսակցական իմաստներով կիրառությունները՝ Ս. Մելքոնյանը նշում է, որ գրողը բառերի այսպիսի նշանակությամբ գործածություններից չպետք է խուսափի, քանի որ «հետևանքն այն կլինի, որ աստիճանաբար մոռացության կտրվեն բառի ժողովրդական իմաստները, կտուժի խոսքի ներքին բազմազանությունը»⁸:

Երբեմն գրողն ընտրում է բառի ժողովրդախոսակցական տարբերակը խոսքն ավելի սեղմ ու ամփոփ արտահայտելու նպատակով: Օրինակ՝ «...նախանձի, կարոտի, անձկության պես մի բան մղմղում է նրա աչքերում» (Ք-486): Գրական միաբառ հոմանիշը չունեցող ընդգծված բառի բառարանային բացատրությունը տրվում է նկարագրական ձևով՝ բութ ու տևական ցավ զգալ⁹, որը, անշուշտ, խոսքը կարող է դարձնել ձգձգված ու երկարաբան:

Կան մի խումբ ժողովրդախոսակցական բառեր, որոնք հեղինակային խոսքում գործածված են գրողի շարադրանքը պարզ, անմիջական դարձնելու, խոսքին սոսկ ժողովրդական երանգ հաղորդելու նպատակով: Արտահայտչականությունից զուրկ, որոշակի վերաբերմունք չարտահայտող խաթր, տակետակ, իսկի, պեծ, իրիկուն, զոռով ժողովրդախոսակցական բառերն ունեն իրենց պատիվ, ամբողջովին, բնավ (բոլորովին), կայծ, երեկո, հազիվ համարժեքները, որոնք հավասարապես գործածվում են լեզվի ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր տարբերակներում: Մինչդեռ նույն՝ խոսքին ժողովրդայնություն հաղորդելու նպատակով գործածված մանդալ (Ք-138) և դիք (Խ-109) բառերի կրակարան և բարձունք գրական համարժեքները բնորոշ են բարձր ոճին և առօրյա-խոսակցական ոճում համարյա չեն գործածվում:

Ժողովրդական լեզվամտածողության տարրերից են նաև վերլուծական բարդությունները՝ անվանական, բայական հարադրությունները, զուգադրական բայերը:

Անվանական հարադրությունները հիմնականում ժողովրդախոսակցական լեզվին հարազատ գոյականների, ածականների հարակցություններ են, որոնք խոսքային համապատասխան իրադրությո-

⁸ Մելքոնյան Ս., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Ե., 1984, էջ 110:

⁹ Բացատրությունը՝ ըստ Է. Աղայանի ԱՀԲԲ-ի:

յուններում սաստկական, ամբողջական իմաստ են արտահայտում, ինչպես՝ ձյուն-ձմեռ (Խ-394), անտեր-անտիրական (Խ-121), մազ-մորուք (Խ-130), կնունք-հարսանիք (Խ-274): Անվանական՝ գոյականական և ածականական հարադիր բարդությունների բաղադրիչների կապը հուշագրություններում հաճախ իրացվում է ու միավորիչ շաղկապով: Ժողովրդի մտածելակերպն արտահայտող բաղադրության այդ բարդություններն իրենց բազմազանությամբ նույնպես նպաստում են հեղինակային խոսքի ժողովրդայնությանը, նրա պարզ ու անմիջական դրսևորմանը. ուշք ու միտք (Խ-388), համ ու հոտ (Ք-9), տեր ու տիրական (Ք-63), արտ ու բոստան (Խ-388), քափ ու քրտինք (Խ-328), խեղճ ու կրակ (Խ-49), դափ ու գուռնա (Խ-26), ազգ ու տակ (Խ-28), կազմ ու պատրաստ (Ք-334), վարք ու բարք (Խ-32):

Հարադրությունների ընտրության հարցում երբեմն էլ գրողը դիմում է նորակազմությունների և ժողովրդախոսակցական անվանական հարադիր բարդությունների կողքին գործածում թարմ ու ինքնատիպ կազմություններ՝ իմաստային նոր նրբերանգներով հարըստացնելով խոսքը: Այսպես՝ բոլորիս հայտնի տուն ու տեղ-ը վերածվել է տուն ու դրամ-ի, որն իմաստային առավել լայն ընդգրկում ունի նյութապես ապահով Արուսին բնութագրող հետևյալ արտահայտությունում. «... ասում են՝ տուն ու դրամ ունի, բայց խառնվել-մոլորվել է ու երերում է...» (Խ-49):

Թուրքական բռնատիրության դեմ պայքարի ելած վանեցիների համախմբվածությունը նկարագրելիս գրողը մուրճ ու մանգաղ անվանական հարադրությունը փոխել է մուրճ ու ասեղ-ի. «... մի քանի ժամվա մեջ ի մի է բերում Վանի բազմատարր ժողովրդին... ձեռքը մուրճ ու ասեղով կոշտացրած արհեստավորին» (Խ-281):

Գյուղից գյուղ թափառող աշուղների նկարագրության հաստիքում դիպուկ ու ինքնատիպ է հաց ու ոչխար հարադրությունը, որը ժողովրդական լեզվում տարածված հաց ու ջուր անվանական բարդության փոփոխված տարբերակն է և ավելի ներդաշնակ է նկարագրվող գյուղական միջավայրին. «...մանկուց սովոր գետակի խոխոջների տակ են հորինում իրենց երգերը, ավանդական տոնախմբությունների հաց ու ոչխար բուրդող եռուզեռի մեջ» (Ք-335):

Կապուտիկյանի հուշագրություններում խոսքին ժողովրդախոսակցական երանգավորում են հաղորդում բայական հարադրությունները: Դրանք, ինչպես նշում է Ալ. Մարգարյանը, «իրենց էությանը խորապես ժողովրդային-ժողովրդական ձևեր են և, բնականաբար, ամենից շատ գործ են ածվում ժողովրդախոսակցական լեզվի լայնածավալ և լայնահուն օվկիանոսում»¹⁰:

Գոյական, ածական հարադիրով կազմված բայերի համապատասխան համադրական ձևերը նույնպես լայն կիրառություն ունեն խոսակցական լեզվում: Սակայն խոսքն ավելի կենդանի ու անմիջական դարձնելու համար Ս. Կապուտիկյանը նախընտրում է հարադիր

¹⁰ Մարգարյան Ալ. Հայերենի հարադիր բայերը, Ե., 1966, էջ 238:

կազմությունները. եռ գալ (Խ-342), գնդակահար անել (Խ-277), կատակի տալ (Ք-93, 403), հերթի գրվել (Ք-333, 356), ցրիվ գալ (Ք-174), զուրկ պահել (Խ-402), ճաք տալ (Ք-145), կախ տալ (Ք-356), այցի գնալ (Ք-19), փուլ գալ (Խ-49), շուռ տալ (Խ-129, Ք-98), թեք ընկնել (Ք-46): Ժողովրդական խոսքին, անշուշտ, ավելի հոգեհարազատ են հարադիր այս կազմությունները, քան նրանց միաբառ եռալ, գնդակահարել, կատակել, հերթագրվել, ցրվել, զրկել, ճաքել, կախել, այցելել, փլչել, շրջել, թեքվել հոմանիշները:

Հարադիր բայերին նախապատվություն տալը պայմանավորված է նաև մեկ այլ հանգամանքով. որոշ դեպքերում հարադրական և նրանց միաբառ զուգահեռներն իմաստային նուրբ, հաճախ զգալի տարբերություն են ունենում: Իմաստային այդ տարբերությունն առավել ցայտուն է երևում խոսքային կիրառության մեջ. «... մեջտեղը զոհ եմ գնում ես ու մեկ էլ մեր վարորդը» (Ք-14), «Փոքր-ինչ դադար առնելուց հետո նորից գնացին երեխաները...» (Խ-84, Ք-418), «Թափ եմ տալիս ծրարը ...» (Ք-70), «...այդ օրերին տիրություն էր արել նրան ...» (Խ-49), «...տանում է, չթողնելով պահ իսկ կանգնել, շունչ քաշել ...» (Ք-11, Խ-298): Ակնհայտ է ընդգծված հարադրական և միաբառ զոհվել, դադարել, թափել, տիրել, շնչել համադրական կազմությունների իմաստային-ոճական զգալի տարբերությունը:

Խոսքին ժողովրդայնություն հաղորդելու տեսակետից առավել տպավորիչ ու արտահայտիչ են զուգադրական բայերը, որոնք կազմված են իմաստով մոտ բայերից և արտահայտում են մեկ ամբողջական, ընդհանրացված իմաստ: Դրանք իրադրական բնույթ ունեն և հուշագրություններում գործածված են իմաստի սաստկացման նպատակով, ինչպես՝ մրոտել-խամրել (Ք-326), խառնվել-մերվել (Խ-333), ջոկել-գտնել (Խ-47), կոփել-մարգել (Խ-192), ծաղրել-ծանակել (Խ-392), ներծծվել-կորչել (Խ-370), անցնել-գնալ (Ք-28), շիկնել-կարմրել (Ք-138), սահել-անցնել (Ք-363):

Ժողովրդական լեզվամտածողությանը հարազատ հարադիր բայերի զուգորդությամբ կազմված բարդությունները՝ թողնել-դուրս գալ (Խ-349), տանել-անց կացնել (Խ-177), զարթնել-ոտքի ելնել (Խ-184), ճեղքել-դուրս պրծնել (Խ-126), թև առնել-թռչել (Ք-316), նաև զուգադրական բայերի դերբայական՝ ենթակայական և հարակատար դերբայներով կազմությունները՝ պահող-պաշտպանող (Խ-280), եկող-վերադարձող (Խ-93), լքող-հեռացող (Խ-362), շարված-կանգնած (Խ-24), անցած-գնացած (Խ-277), կորած-մոլորած (Խ-25), եկած-հասած (Խ-197) և այլն, ստեղծում են կենդանի, տպավորիչ պատկերներ:

Զուգադրական բայերի գործածությամբ գրողը խուսափում է նաև երկար, անհարկի նկարագրություններից. «Շատ ասող-խոսող մարդ դուրս եկավ այս Վարդանը...» (Ք-184), «...ուտող-խմող մարդ է Հուսեյնճյանը» Ք-137), «...չորս երեխաներն էլ հագած-կապած էին»

Խ-122), «...ձեռած-չափած տների առջև՝ ձեռած-չափած ծաղկամարգեր...» (Խ-288):

Լեզվական նշված միջոցները՝ որպես ժողովրդախոսակցական լեզվի կարևոր տարրեր, ներդաշնակվելով հուշագրությունների բառապաշարի համաձուլվածքին, անմիջականություն, մտերմություն են հաղորդում հեղինակի խոսքին: Նրանց ընտրությամբ ու գործածությամբ ընդգծվում է նաև Կապուտիկյանի ժողովրդական, ազգային ու պատկերավոր լեզվամտածողության ինքնատիպությունը:

НАРОДНО-РАЗГОВОРНАЯ ЛЕКСИКА В МЕМУАРАХ С. КАПУТИКЯН

МИРУМЯН Л. М.

Резюме

В своих мемуарах С. Капутикян использует два пласта современного армянского языка: восточноармянский и западноармянский, а также диалектную лексику и разговорную речь западноармянского языка. При этом употребление разных пластов лексики не нарушает гармонии между авторским языком и языком персонажей. Отличительной чертой ее языка является употребление заимствованных слов, аффиксальных образований, сопоставлений и повторов.

COLLOQUIAL LANGUAGE IN THE TRAVEL MEMOIRS BY S. KAPUTIKIAN

L. MIRUMYAN

Abstract

In her memoirs, S. Kaputikyan uses two varieties of modern Armenian: Eastern Armenian and Western Armenian. She also uses Western Armenian dialect, vernacular, and colloquial vocabulary. Using different layers of the vocabulary, S. Kaputikyan creates a balance between the author's language and the language of the characters. Her language is characterized by the use of borrowings, affixation, comparisons, and repetitions.